ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 4663-Ա «18» նոյեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՄՈՍԿՎԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանի № Ն/ 68040-25 գրությունը և Ռուսաստանի թերապևտների գիտական բժշկական հասարակության նախագահ Օ.Մ Դրապկինայի հրավերը՝ Ռուսաստանի Ազգային հոբելյանական 20-րդ կոնգրեսին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2025 թվականի նոյեմբերի 19-ից 21-ը ներառյալ, գործուղել Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվա՝ հետևյալ կազմով.

Դավիթ Կարապետյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ
Լենա Մելքոնյան	Երևանի քաղաքապետի օգնական
Հովիկ Բալյան	«Երևան» ԲԿ ՓԲԸ տնօրեն

2.Ընդունել ի գիտություն, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանի և Երևանի քաղաքապետի օգնական Լենա Մելքոնյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվելու են Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի միջոցներով հաշվին, իսկ Հովիկ Բալյանի ծախսերը՝ սեփական միջոցների հաշվին:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանի բացակայության ընթացքում աշխատակազմի առողջապահության վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության գլխավոր մասնագետ Մարինե Սեթյանին:

4. «Երևան» ԲԿ ՓԲԸ տնօրեն Հովիկ Բալյանի բացակայության ընթացքում աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել բուժական գծով փոխտնօրենի ժ/պ Հարություն Ղռմաջյանին:

5. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ